

Մեկ մասնակից ունեցող սահմանափակ պատասխանատվությամբ

փակ ընկերությունների մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ,

հաշվի առնելով Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին համաձայնագիրը և, մասնավորապես, դրա 54-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

համագործակցելով Եվրոպական պառլամենտի հետ (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

քանի որ որոշ երաշխիքներ, որոնք, մասնակիցների և այլոց շահերի պաշտպանության նպատակով, անդամ պետությունները պահանջում են ընկերություններից և ֆիրմաներից՝ Համաձայնագրի 58-րդ հոդվածի երկրորդ պարբերության իմաստով, պետք է համապատասխանեցվեն Համայնքի տարածքում՝ այդ երաշխիքները համարժեք դարձնելու նպատակով,

քանի որ այս ոլորտում հրապարակայնության, պարտավորությունների վավերականության, ընկերությունների գրանցման անվավերության, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ Իսպանիայի ու Պորտուգալիայի անդամակցության մասին ակտով վերջին անգամ փոփոխված թիվ 68/151/ԵՏՀ (4) և 78/660/ԵՏՀ (5) հրահանգները և նույն ակտով փոփոխված թիվ 83/349/ԵՏՀ (6) հրահանգը կիրառվում են կանոնադրական կապիտալով բոլոր ընկերությունների նկատմամբ, քանի որ ստեղծման ու կապիտալի, միաձուլման և բաժանման վերաբերյալ՝ Իսպանիայի ու Պորտուգալիայի անդամակցության մասին ակտով վերջին անգամ փոփոխված թիվ 77/91/ԵՏՀ (7) և 78/855/ԵՏՀ (8) հրահանգները և 82/891/ԵՏՀ (9) հրահանգը կիրառվում են միայն սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների նկատմամբ,

քանի որ փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) գործողությունների ծրագիրը (10) հաստատվել է Խորհրդի 1986 թվականի նոյեմբերի 3-ի որոշմամբ,

քանի որ վերջին մի քանի տարիների ընթացքում որոշ անդամ պետությունների օրենսդրությունում իրականացված բարեփոխումները, որոնցով թույլատրվում է ստեղծել մեկ

մասնակից ունեցող սահմանափակ պատասխանատվությամբ փակ ընկերություններ, հանգեցրել են անդամ պետությունների օրենքների միջև անհամապատասխանության,

ՊՏ թիվ C 291, 20. 11. 1989թ., էջ 53.

քանի որ Համայնքի տարածքում անհատ ձեռներեցի պատասխանատվության սահմանափակման համար անհրաժեշտ է ստեղծել իրավական փաստաթուղթ՝ չսահմանափակելով անդամ պետությունների այն օրենքների գործողությունը, որոնք բացառիկ դեպքերում պահանջում են, որ ձեռներեցը պատասխանատվություն կրի իր կազմակերպության պարտավորությունների համար,

քանի որ սահմանափակ պատասխանատվությամբ փակ ընկերությունը կարող է լինել մեկ մասնակից ունեցող ընկերություն իր ստեղծման պահից կամ կարող է այդպիսին դառնալ, երբ դրա բոլոր բաժնետոմսերի սեփականատեր է դառնում մեկ անձ. քանի որ, մինչ կազմակերպություններին վերաբերող ներպետական օրենքների դրույթների համապատասխանեցումը, անդամ պետությունները կարող են որոշակի հատուկ դրույթներ և պատժամիջոցներ սահմանել այն դեպքերի համար, երբ ֆիզիկական անձը մի քանի ընկերությունների միակ մասնակիցն է կամ, երբ մեկ մասնակից ունեցող ընկերությունը կամ այլ իրավաբանական անձը որևէ ընկերության միակ մասնակիցն է. քանի որ այս դրույթի միակ նպատակն է՝ հաշվի առնել որոշ ներպետական օրենքների միջև առկա տարբերությունները. քանի որ այդ նպատակով անդամ պետությունները կարող են սահմանափակել մեկ մասնակից ունեցող ընկերությունների ձևի օգտագործումը կամ վերացնել միակ մասնակցի պատասխանատվության սահմանափակումները. քանի որ անդամ պետություններն ազատ են սահմանելու մեկ մասնակից ունենալու հետևանքով առաջացող՝ մեկ մասնակից ունեցող ընկերությունների ռիսկերը «ապահովագրող» կանոններ՝ մասնավորապես տեղաբաշխված կապիտալի վճարումն ապահովելու համար,

քանի որ, այն փաստը, որ բոլոր բաժնետոմսերի սեփականատեր է դարձել մեկ բաժնետեր, ինչպես նաև միակ մասնակցի վերաբերյալ տեղեկությունները պետք է գրառվեն հանրությանը մատչելի գրանցամատյանում,

քանի որ ընդհանուր ժողովի իրավասությամբ գործող միակ մասնակցի ընդունած որոշումը պետք է գրավոր արձանագրվի,

քանի որ միակ մասնակցի և իր կողմից ներկայացվող իր ընկերության միջև կնքված պայմանագրերը նույնպես պետք է գրավոր արձանագրվեն, այնքանով, որքանով այդ պայմանագրերը չեն վերաբերում բնականոն պայմաններում կատարված ընթացիկ գործողություններին,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Մույն Հրահանգով սահմանված համաձայնեցման միջոցները կիրառվում են հետևյալ տեսակի ընկերություններին վերաբերող անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի, վարչական ակտերի նկատմամբ.

– Գերմանիայում՝

Gesellschaft mit beschränkter Haftung,

– Բելգիայում՝

Societe privee a responsabilite limitee/de besloten vennootschap met beperkte aansprakelijkheid,

– Դանիայում՝

Anpartsselskaber,

– Իսպանիայում՝

Sociedad de responsabilidad limitada,

– Ֆրանսիայում՝

Societe a responsabilite limitee,

– Հունաստանում՝

Etaireia periorismenis efthynis,

– Իռլանդիայում՝

Private company limited by shares or by guarantee,

– Իտալիայում՝

Societa a responsabilita limitata,

– Լյուքսեմբուրգում՝

Societe a raspnsabilite limitee,

–Նիդերլանդներում՝

Besloten vennootschap met beperkte aan-sprakelijkheid,

– Պորտուգալիայում՝

Sociedade por quotas,

–Միացյալ Թագավորությունում՝

Private company limited by shares or by guarantee:

Հոդված 2

1. Ընկերությունը մեկ մասնակից կարող է ունենալ ստեղծման պահին, ինչպես նաև, երբ դրա բոլոր բաժնետոմսերի սեփականատեր է դառնում մեկ անձը (մեկ մասնակից ունեցող ընկերություն):

2. Անդամ պետությունները կարող են, մինչև կազմակերպություններին վերաբերող ներպետական օրենքների համապատասխանեցումը, սահմանել հատուկ դրույթներ կամ պատժամիջոցներ հետևյալ դեպքերի համար.

ա) երբ ֆիզիկական անձը մի քանի ընկերությունների միակ մասնակիցն է,

բ) երբ մեկ մասնակից ունեցող ընկերությունը կամ որևէ այլ իրավաբանական անձ որևէ ընկերության միակ մասնակիցն է:

Հոդված 3

Երբ ընկերությունը դառնում է մեկ մասնակից ունեցող ընկերություն այն պատճառով, որ դրա բոլոր բաժնետոմսերի սեփականատեր է դառնում մեկ անձ, այդ փաստը, ինչպես նաև միակ մասնակցի մասին տեղեկությունները պետք է գրանցվեն գործի մեջ կամ գրառվեն գրանցամատյանում՝ թիվ 68/151/ԵՏՀ հրահանգի հոդված 3«1»-ի և «2»-ի իմաստով, կա՛մ էլ գրանցվեն ընկերության կողմից վարվող և հանրությանը մատչելի գրանցամատյանում:

Հոդված 4

1. Միակ մասնակիցն իրականացնում է ընկերության ընդհանուր ժողովի լիազորությունները:
2. Առաջին պարբերությունում նշված լիազորություններն իրականացնելիս միակ մասնակցի ընդունած որոշումները արձանագրվում են կամ ձևակերպվում են գրավոր:

Հոդված 5

1. Միակ մասնակցի և իր կողմից ներկայացվող իր ընկերության միջև կնքված պայմանագրերը արձանագրվում են կամ ձևակերպվում են գրավոր:
2. Անդամ պետությունները կարող են 1-ին պարբերությունը չկիրառել բնականոն պայմաններում կատարված ընթացիկ գործողությունների նկատմամբ:

Հոդված 6

Եթե անդամ պետությունը թույլատրում է, որ սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունը լինի հոդված 2«1»-ով սահմանված մեկ մասնակից ունեցող ընկերություն, ապա սույն Հրահանգը կիրառվում է:

Հոդված 7

Անդամ պետությունը կարող է չթույլատրել մեկ մասնակից ունեցող ընկերության ստեղծումը, եթե իր օրենսդրությունը նախատեսում է, որ անհատ ձեռներեցը կարող է հիմնադրել կազմակերպություն, որի պատասխանատվությունը սահմանափակվում է սահմանված որևէ գործունեության համար նախատեսվող գումարի չափով՝ պայմանով, որ նման կազմակերպությունների նկատմամբ կիրառվեն սույն Հրահանգով սահմանված կամ 1-ին հոդվածում նշված ընկերությունների վրա տարածվող՝ Համայնքի այլ իրավական դրույթներով սահմանված համարժեք երաշխիքներ:

Հոդված 8

1. Անդամ պետությունները սույն հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը պետք է գործողության մեջ դնեն ոչ ուշ, քան մինչև 1992 թվականի հունվարի 1-ը: Այնուհետև դրանք այդ մասին տեղեկացնում են Հանձնաժողովին:

2. Անդամ պետությունները կարող են սահմանել, որ 1992 թվականի հունվարի 1-ի դրությամբ արդեն իսկ գոյություն ունեցող ընկերությունների նկատմամբ սույն Հրահանգը չի կիրառվի մինչև 1993 թվականի հունվարի 1-ը:

3. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ներկայացնում ներպետական իրավունքի հիմնական դրույթների տեքստերը, որոնք ընդունվում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 9

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1989 թվականի դեկտեմբերի 21-ին:

Խորհրդի կողմից՝ Նախագահ Ե. ԿՐԵՍՈՆ

- (1) ՊՏ, թիվ C 173, 2. 07. 1988թ., էջ 10,
- (2) ՊՏ, թիվ C 96, 17. 04. 1989թ., էջ 92 և
- (3) ՊՏ, թիվ C 318, 12. 12. 1988թ., էջ 9,
- (4) ՊՏ, թիվ L 65, 14. 03. 1968թ., էջ 8,
- (5) ՊՏ թիվ L 222, 14. 08. 1978թ., էջ 11,
- (6) ՊՏ, թիվ L 193, 18. 07. 1983թ., էջ 1,
- (7) ՊՏ, թիվ L 26, 30. 01. 1977թ., էջ 1,
- (8) ՊՏ, թիվ L 295, 20. 10. 1978թ., էջ. 36,
- (9) ՊՏ, թիվ L 378, 31. 08.1982թ., էջ. 47,
- (10) ՊՏ, թիվ C 287, 14. 11. 1986թ., էջ 1: